

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020-2024թթ.
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ



- » Սույն **ոգնավարությունը** սահմանում է **ՓՄՁ** զարգացմանն ուղղված քաղաքականության շրջանակը, նպատակները, ակնկալվող արդյունքները և նախատեսվող միջոցառումները **2020-2024թթ.** համար:
- » Ռոգնավարությունն իրականացվելու է ըստ տարեկան գործողությունների ծրագրերի, որը սահմանված է եղել 2020-2022թթ. թվականների համար, իսկ դրա իրականացման համակարգման, մշտադիտարկման և գնահատման գործառույթը վերապահված է ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը:
Միաժամանակ հարկ է նշել, որ 2023-2024թթ. թվականների համար ոգնավարությունից բխող տարեկան գործողությունների ծրագիր չի մշակվել և իրականացվել:
- » Ռոգնավարության նպատակն է նպաստել բարեփոխումներին ՓՄՁ մրցունակության բարձրացման համար առանցքային ոլորտներում, ինչպիսիք են կարգավորող և ինստիտուցիոնալ դաշտը, ռեսուրսների, այդ թվում՝ ֆինանսների հասանելիությունը, մարդկային կապիտալի զարգացումը, շուկաների հասանելիությունը, ձեռնարկատիրական մշակույթի զարգացումը:



ՓՄՁ սուբյեկտների չափանիշները

Հայաստանում գերփոքր, փոքր և միջին կազմակերպությունների սահմանումը

	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը	Նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթ	կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը
Գերփոքր	0-9	<100 միլիոն ՀՀ դրամ	<100 միլիոն ՀՀ դրամ
Փոքր	10-49	<500 միլիոն ՀՀ դրամ	<500 միլիոն ՀՀ դրամ
Միջին	50-249	<1.5 մլրդ. ՀՀ դրամ	<1.0 մլրդ. ՀՀ դրամ


»» **2018թ.** - ում գործող **ՓՄՁ** շրջանակի **տնտեսավարողների քանակը** կազմել է **68 780**, որոնց մեծ մասը՝ գերփոքր ձեռնարկություններ են:

ՓՄՁ-ների 52 % (35 753 տնտեսավարող) գործունեություն են ծավալում **Երևանում**:

»» **2023թ.** Հայաստանում տնտեսական գործունեություն իրականացրած **տնտեսավարողների թիվը** կազմել է **109 592**, որոնց մեծ մասը՝ գերփոքր ձեռնարկություններ են:

ՓՄՁ-ների մեծ մասը 52 % (57 565 տնտեսավարող) կենտրոնացած է **Երևանում**:





2018թ. - 2023թ.
ՓՄՁ շրջանակի տնտեսավարողների
քանակը ըստ մարզերի

	2018	2023
Երևան	35 753	57 565
Արագածոտն	1 780	3 404
Արարատ	4 229	6 940
Արմավիր	3 946	6 366
Գեղարքունիք	2 764	4 520
Լոռի	4 261	6 457
Կոտայք	5 901	8 930
Շիրակ	3 237	5 187
Սյունիք	3 179	4 417
Վայոց ձոր	1 228	1 917
Տավուշ	2 502	3 889
Ընդամենը	68 780	109 592


2018թ. - 2023թ.

Հայաստանում տնտեսական գործունեություն
իրականացրած **տնտեսավարողների**
ընդհանուր թիվը աճել է 59,34%



Նորարարական և մրցունակ ՓՄՁ-ների ձևավորման և աճի
համար ստեղծել բարենպաստ միջավայր

Նպատակները և
թիրախները



ՓՄՁ-ում զբաղվածների ցուցանիշի աճ՝ *տարեկան միջինը*
2.5 %



ՓՄՁ-ների արտադրողականության ավելացում՝ 2021-
2023թթ. *համար միջինը տարեկան 3%, իսկ 2024 թվականի*
համար՝ 7.5%:



»» **ՓՄՁ-ների քանակը, 2020-2024թթ.**

	2020թ	2021թ	2022թ	2023թ	2024թ	
Գերփոքր	70 030	78 530	85 150	96 527	103 773	+ 78,18 %
Փոքր	4 272	3 807	3 994	4 279	4 841	+ 13,32 %
Միջին	743	695	687	726	817	+ 9,96 %
Խոշոր	135	132	133	142	161	+ 19,26 %
Ընդամենը	75 180	83 164	89 964	101 674	109 592	+ 45,77 %

+ 10,62 %

+ 8,18 %

+ 13,02 %

+ 7,79 %

ՓՄՁ-ում զբաղվածների ցուցանիշի տարեկան միջին աճը՝ 9,9%


ՓՄՁ-ների քանակը, 2020թ.-ին կազմել է 75 180 սուբյեկտ, իսկ 2024թ.-ին 109 592 սուբյեկտ: 2020-2024թթ. գրանցվել է ՓՄՁ սուբյեկտների քանակի աճ 45,77%:



Առկա
իրավիճակը

**ՓՄՁ սուբյեկտները 2020-2024թ-ին կրկնակի ավելի մեծ
ավելացված արժեք են ստեղծել, քան խոշոր
ձեռնարկությունները**

»» Համախառն ավելացված արժեքի բաշխումը, 2019-2023թ., % ՀՆԱ-ի




ՓՄՁ սուբյեկտների կշիռը ՀՆԱ-ի մեջ 2023թ.-ին 5.6 տոկոսային կետով կամ (21,54%) ավելի մեծ է քան 2019թ.-ին:



2024թ-ին ՓՄՁ սուբյեկտների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի և վճարների ընդհանուր գումարը կրկնապատկվել է համեմատած 2020թ-ի հետ (616,48 մլրդ ՀՀ դրամ և 292,39 մլրդ ՀՀ դրամ)


մլրդ.ՀՀ դրամ






Շահութահարկ


մլրդ.ՀՀ դրամ



ԱԱՀ



Եկամտային հարկ



ՓՄՁ սուբյեկտների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված շահութահարկը **2020** թվին կազմել է **34,0 մլրդ. ՀՀ դրամ** իսկ **2024 թվականին 115,6%-ով** ավել և կազմել է **73,3 մլրդ.ՀՀ դրամ**: **2024** թվականին **գերփոքր** սուբյեկտների վճարված հարկերի և վճարների **գումարը աճել է +80,1%, փոքր** սուբյեկտները **+124,8%, միջին +123,8%**


ՓՄՁ սուբյեկտների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված ԱԱՀ **2020** թվին կազմել է **114,9 մլրդ.ՀՀ դրամ** իսկ **2024 թվականին 79,5%-ով** ավել և կազմել է **206,2 մլրդ.ՀՀ դրամ**: **2024** թվականին **գերփոքր** սուբյեկտների վճարված հարկերի և վճարների **գումարը աճել է +66,2%, փոքր** սուբյեկտները **+78,5%, միջին +83,5%**

ՓՄՁ սուբյեկտների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված եկամտային հարկը **2020** թվին կազմել է **91,7 մլրդ.ՀՀ դրամ** իսկ **2024 թվականին 77,3%-ով** ավել և կազմել է **162,6 մլրդ.ՀՀ դրամ**: **2024** թվականին **գերփոքր** սուբյեկտների վճարված հարկերի և վճարների **գումարը աճել է +70,1%, փոքր** սուբյեկտները **+91,2%, միջին +69,3%**




մլրդ.ՀՀ դրամ


Շրջանառության հարկ



Ակցիզային հարկ



Այլ հարկեր/վճարներ



— Գերփոքր — Փոքր — Միջին

ՓՄՁ սուբյեկտների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված շրջանառության հարկ 2020 թվին կազմել է **20,7 մլրդ. ՀՀ դրամ** իսկ 2024 թվականին **100%-ով** ավել և կազմել է **41,4 մլրդ.ՀՀ դրամ**: 2024 թվականին գերփոքր սուբյեկտների վճարված հարկերի և վճարների գումարը աճել է **+72,1%**, փոքր սուբյեկտները **+152,7%**, միջին **+183,3%**

ՓՄՁ սուբյեկտների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված ակցիզային հարկ 2020 թվին կազմել է **12,9 մլրդ. ՀՀ դրամ** իսկ 2024 թվականին **17,1%-ով** ավել և կազմել է **15,1 մլրդ.ՀՀ դրամ**: 2024 թվականին գերփոքր սուբյեկտների վճարված հարկերի և վճարների գումարը աճել է **+288,9%**, փոքր սուբյեկտները նվազել է **-22,4%**, միջին **+9,9%**

ՓՄՁ սուբյեկտների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված այլ հարկերը և վճարները 2020 թվին կազմել է **52,2 մլրդ. ՀՀ դրամ** իսկ 2024 թվականին **125,3%-ով** ավել և կազմել է **117,6 մլրդ.ՀՀ դրամ**: 2024 թվականին գերփոքր սուբյեկտների վճարված հարկերի և վճարների գումարը աճել է **+98,6%**, փոքր սուբյեկտները **+139,8%**, միջին **+154,3%**



Հիմնական ուղղություններ և առաջնահերթ գործողություններ

ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի ուժեղացման, մրցունակության բարձրացման համար կարևորվել են հետևյալ ռազմավարական բարձր մակարդակի նպատակները՝

1

Ֆինանսական ռեսուրսների հասանելիության ավելացում (27 ենթագործողություն),

2

ՓՄՁ սուբյեկտների կարողությունների և ձեռնարկատիրական մշակույթի զարգացում (35 ենթագործողություն),

3

ՓՄՁ սուբյեկտների համար շուկաների հասանելիության ապահովում (26 ենթագործողություն),

4

ՓՄՁ զարգացման համար բարենպաստ ինստիտուցիոնալ և իրավական միջավայրի ապահովում (31 ենթագործողություն):


Ֆինանսական ռեսուրսների հասանելիություն ավելացում			Արդյունք
Ժամկետ	կատարված	չկատարված	
2020	5	-	100%
2021	8	4	66,67%
2022	5	-	100%
Շարունակական	5	-	100%
ՓՄՁ սուբյեկտների կարողությունների և ձեռնարկատիրական մշակույթի զարգացում			Արդյունք
Ժամկետ	կատարված	չկատարված	
2020	1	1	50%
2021	10	5	66,67%
2022	6	2	75%
Շարունակական	9	-	100%
Տարեկան	1	-	100%
ՓՄՁ սուբյեկտների համար շուկաների հասանելիության ապահովում			Արդյունք
Ժամկետ	կատարված	չկատարված	
2020	-	6	0%
2021	10	2	83,33%
2022	2	-	100%
Շարունակական	6	-	100%
ՓՄՁ զարգացման համար բարենպաստ ինստիտուցիոնալ և իրավական միջավայրի ապահովում			Արդյունք
Ժամկետ	կատարված	չկատարված	
2020	2	4	66,67%
2021	9	6	60%
2022	2	-	100%
Շարունակական	7	1	87,50%

* Նպատակներն ընդհանուր ներառում են 22 առաջնահերթ գործողություն՝ թվով 119 ենթագործողություններով:



**ՀՀ-ում ՓՄՁ զարգացման 2020-2024 թթ.-ի ռազմավարության
գործողությունների պլանի իրականացման ցուցանիշներ, (2022 թ.-ի
կատարողականի արդյունքում)**

Ընդհանուր առմամբ,
ռազմավարական
գործողությունների պլանը
ներառում էր **119**
գործողություն, որոնցից 88-
ը (**73,95 %**) **կատարվել** է, իսկ
31 գործողությունը (**26,05 %**)
չի իրականացվել:





«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը 2020թ. վերակազմակերպվել է, մարզային մասնաճյուղերը լուծարվել են, ինստիտուցիոնալ ներուժը ուղղվել է ներդրումների խթանմանը, ինչի հետևանքով ՓՄՁ աջակցության պետական կառույցը դադարել է գոյություն ունենալ:

«Սոցիալական ձեռնարկատիրության զարգացման հայեցակարգի» և քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների փաթեթը հանվել է շրջանառությունից՝ կոնցեպտուալ տարաձայնությունների պատճառով:

Համաշխարհային բանկի 2020թ. դասակարգման արդյունքում Հայաստանը տեղափոխվել է միջինից բարձր եկամտով երկրների խմբում, ինչի պատճառով որոշ արտոնությունների տրամադրման ժամկետը նվազեցվել է, իսկ ծրագրերի իրականացումը դադարեցվել:

2020-2022 թթ. COVID-19 համավարակի և պատերազմի հետևանքով ռազմավարական առաջնահերթությունները վերանայվել են, ռեսուրսները վերաբաշխվել հրատապ խնդիրների լուծմանը:

Պատերազմի արդյունքում առաջացած նոր իրադրության պայմաններում առաջնահերթությունների վերանայման պատճառով:





Ռազմավարական պլանի 2020-2022 թթ. չկատարված կետերի մասին



2020-2022 թթ. ռազմավարական պլանի մի շարք կետեր տարբեր պատճառներով չիրականացվեցին
Նախատեսված ժամկետում:

Էկոնոմիկայի նախարարությունը հաջորդությամբ կատարվեցին 2024 թվականին:

Ռազմավարության համառոտագրումը իրականացված միջոցառումները 2024 թվականին:

»» 1. Վճարային պարտավորությունների կանխարգելում (Ռազմավարության Հավելված №2, կետ 4.3)

- Նախագիծ. Առևտրային ցանցերի և մատակարար կազմակերպությունների միջև վճարային պարտավորությունների պարբերաբար չկատարումը կանխարգելող կարգավորումներ
- Ընդունվել է. ՀՀ ԿՕ N32-Ն, 16.01.2024
- Նպատակ. ապահովել մատակարարների շահերի պաշտպանություն և կանխել վճարումների չկատարմամբ ՓՄՁ-ների

»» ֆինանսական ռիսկերը:

»» 2. Ֆակտորինգի իրավակարգավորում (Ռազմավարության Հավելված №2, կետ 4.3)

- Նախագիծ. Գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի գիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի ներդրում

»» • Ընդունվել է. ՀՀ ԿՕ N1252-Ն, 08.08.2024

- Նպատակ. ընդլայնել ՓՄՁ-ների ֆինանսական հասանելիությունը և բարելավել շրջանառու միջոցների կառավարման հնարավորությունները:

»» 3. Անհուսալի պարտքերի դուրսգրման բարեփոխում (Ռազմավարության Հավելված №2, կետ 4.3)

- »» • Նախագիծ. Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման կարգավորումների բարեփոխում
- Ընդունվել է. ՀՀ ԿՕ 843-Ա, 2024 թ. (ներկայացվել է Ազգային ժողով)
- Նպատակ. հնարավորություն տալ ՓՄՁ-ներին նվազեցնել հարկաբազան` դուրս գրելով փաստացի անհնարին գանձելիք պարտքերը:

»» 4. SAFE պայմանագրերի ներդրում (Ռազմավարության Հավելված №2, կետ 4.4)

- »» • Նախագիծ. ՍԵՅԲ (Simple Agreement for Future Equity – SAFE) պայմանագրերի համար իրավակարգավորող դաշտի ստեղծում
- Ընդունվել է. ՀՀ ԿՕ N704-Ն, 02.05.2024
- Նպատակ. ներդրումային միջավայրի բարելավում, ստարտափների և ՓՄՁ-ների ֆինանսավորման նորարարական գործիքների հասանելիություն:

»» 5. Արտակարգ իրավիճակներում օժանդակություն (Ռազմավարության Հավելված №2, կետ 3.5)

- Նախագիծ. Լոռու և Տավուշի մարզերում 2024 թ. մայիսի 25-26-ի հեղեղումների հետևանքով տուժած տնտեսավարողների օժանդակություն



» 2024 թվականին իրականացվել են աշխատանքներ նաև նոր ռազմավարական ծրագրի մշակման ուղղությամբ: Արդյունքում մշակվել է «Հայաստանի ՓՄՁ մրցունակության 2026-2030 թվականների ռազմավարական ծրագիրը» և դրա կից գործողությունների ծրագրի նախագիծը, որով ՓՄՁ-ների զարգացման հայեցակարգը հիմնվում է դրանց մրցունակության բարձրացման վրա՝ այն սահմանելով որպես հիմնական ռազմավարական ուղղություն:

» Ռազմավարական ծրագրով նախատեսվում է ՓՄՁ ոլորտում առկա հիմնախնդիրների լուծումը պետական աջակցության նպատակային գործիքակազմի կիրառմամբ, որի ազդեցությունը միտված է ձեռնարկատիրական վարքագծի ձևափոխմանը:

» Ծրագրի մշակումը զուգակցվել է նաև նախորդ ռազմավարության և դրա գործողությունների ծրագրում ներառված, սակայն չկատարված միջոցառումների չկատարման պատճառների վերհանմամբ: Միաժամանակ այդ միջոցառումները ուսումնասիրվել են արդիականության և արդյունավետության տեսանկյունից: Վերլուծության արդյունքում դրանց մի մասի բարեփոխված տարբերակները ներառվել են նոր ռազմավարական ծրագրում:

Այս մոտեցումը հնարավորություն է տալիս խուսափել հնացած կամ պակաս արդյունավետ նախաձեռնություններից, ապահովել միջոցառումների ավելի թիրախային իրականացումը, ինչպես նաև բարձրացնել ռազմավարության իրականացման արդյունավետությունը և հասնել սպասվող արդյունքների առավելագույն ազդեցությանը: Ռազմավարական նոր ծրագիրը հնարավորություն է տալիս ապահովել ոլորտի



Արտադրողականության խթանման նպատակային ծրագիր

» Մեքենա-սարքավորումների վարկի/լիզինգի տոկոսադրույքի
սուբսիդավորում



Նպատակ

Տնտեսավարողների համար
ապահովել մատչելի
ֆինանսական միջոցներ՝
արտադրական
կարողությունները
արդիականացնելու
նպատակով:

Շահառու

Նպատակային ոլորտներում
և ՀՀ տարածքում
գործունեություն
իրականացնող, առևտրային
և ոչ առևտրային
կազմակերպությունները կամ
անհատ ձեռնարկատերեր:

Օժանդակության նախնայություն

Կրթական ֆինանսական
կազմակերպություններից
ստացած վարկի/լիզինգի
տարեկան տոկոսադրույքի
սուբսիդավորում:



Աջակցության գործիք. տնտեսավարողների կողմից Միջոցառման իմաստով նպատակային համարվող ոլորտներում
գտագործելու նպատակով մեքենա-սարքավորումների ձեռքբերման համար վարկի և լիզինգի տարեկան տոկոսադրույքի **6-10%**
սուբսիդավորում մինչև **42 ամիս**:

Նպատակային ոլորտներ

C(ՍԻ) - Մշակող արդյունաբերություն

B (ԲԻ) - Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի
շահագործում

J (ԶԵՅ) - Տեղեկատվություն և կապ

F (ԷՖ) - Շինարարություն

H (ԷՅԶ) - Փոխադրում և պահեստային
տնտեսություն

D (ԴԻ) - Էլեկտրականության գազի գոլորշու և լավորակ օդի
մատակարարում

M (ԷՄ) - Մասնագիտական, գիտական և տեխնիկական
գործունեություն

P (ՓԻ) - Կրթություն

Q (ՔՅՈՒ) - Առողջապահություն և բնակչության սոցիալական
սպասարկում

I 55 (ԱՅ) - Կացության կազմակերպում

G 45.2 (ԶԻ) - Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում
և նորոգում

N 77 (ԷՆ) - Վարձույթ և լիզինգ

R 90 (ԱՌ) - Ստեղծագործական, արվեստի և հանդիսատիի
ներկայացումների կազմակերպման բնագավառում
գործունեություն



Արտադրողականության իրժանման
Նպատակային ծրագիր արդյունքային
ցուցանիշներ

7083

Ծրագրի մեկնարկից մինչև 2024
թվականի դեկտեմբերի 31-ը կնքված
պայմանագրեր

12955

Ծրագրի շրջանակներում ձեռք բերված
սարքավորումներ





Պորտֆելի շուրջ 70 %-ը կազմել է
լիզինգը, 30 %-ը՝ վարկը



Նպատակային ծրագրի շրջանակներում
գործընկեր ֆինանսական
կազմակերպությունների թվաքանակը 23 է:

367,5
մլրդ
դր


Նպատակային ծրագրի շրջանակներում
ձևավորված **վարկային/լիզինգային
պորտֆել՝ 367,5 մլրդ դրամվարկի/լիզինգի
քանակը**







Արտադրողականության իրական
նպատակային ծրագիր արդյունքային
ցուցանիշներ

» 2020-2024 թթ. ընթացքում, ծրագրի շրջանակում գործունեություն իրականացնող կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակի աճ գրանցվել է բոլոր մարզերում: Ամենամեծ աճը արձանագրվել է **Արագածոտնի մարզում՝ 80,07%, Սյունիքի մարզում՝ 75,59%, և Գեղարքունիքի մարզում՝ 62,11%:**






»» 2020-2024 թթ. ընթացքում, ծրագրի շրջանակում
3516 գործունեություն իրականացնող
կազմակերպությունների հարկատեսակի
փոփոխության քիչամիկա



2020-2024 թթ. ընթացքում ծրագրի շրջանակում
գործունեություն իրականացրած
կազմակերպությունների հարկային համակարգի
փոփոխության արդյունքում արձանագրվել է հարկերի
վճարման **105.4% աճ**:



»» Ծրագրի շրջանակում կազմակերպությունների քանակը ըստ մարզերի, %



Գործունեության մարզը	Տևտեսվարողների քանակը
ԱՐԱԳԱԾՈՏՆ	143
ԱՐԱՐԱՏ	234
ԱՐՄԱՎԻՐ	219
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	166
ԵՐԵՎԱՆ	1735
ԼՈՌԻ	154
ԿՈՏԱՅՔ	376
ԾԻՐԱԿ	149
ՍՅՈՒՆԻՔ	167
ՎԱՅՈՑ ՁՈՐ	64
ՏՆԱԿՈՒՇ	109

»» 2020-2024 թթ. ընթացքում, ծրագրի շրջանակում գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից գրանցվել է վճարված հարկերի աճ բոլոր մարզերում: Ամենամեծ աճը արձանագրվել է **Արագածոտնի մարզում 228.61%, Գեղարքունիքի մարզում 177.29%, և Վայոց ձորի մարզում 169.52%:**

Գործունեության մարզը	2020թ. ՀՀ դրամ	2020-2021թթ.	2021թ. ՀՀ դրամ	2021-2022թթ.	2022թ. ՀՀ դրամ	2022-2023թթ.	2023թ. ՀՀ դրամ	2023-2024թթ.	2024թ. ՀՀ դրամ	2020-2024թթ.
ԱՐԱԳԱԾՈՏՆ	1 178 144 691,00	+53,68%	1 810 562 634,00	+32,02%	2 390 328 953,00	+41,59%	3 384 394 795,00	+14,39%	3 871 456 219,00	+228,61%
ԱՐԱՐԱՏ	10 542 220 576,50	+12,65%	11 875 342 671,00	+33,75%	15 882 765 505,00	+20,28%	19 103 719 915,00	+9,56%	20 930 173 207,00	+98,54%
ԱՐՄԱՎԻՐ	11 840 032 557,00	+10,47%	13 079 299 706,00	+20,06%	15 703 439 206,00	+16,31%	18 264 969 818,00	-2,80%	17 753 961 713,00	+49,95%
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	1 484 937 551,00	+7,75%	1 600 025 527,00	+22,84%	1 965 529 247,00	+35,86%	2 670 275 788,00	+54,20%	4 117 547 879,00	+177,29%
ԵՐԵՎԱՆ	126 042 943 195,80	+24,01%	156 311 714 888,00	+26,64%	197 959 449 133,00	+18,86%	235 303 660 001,00	+11,97%	263 460 462 350,00	+109,02%
ԼՈՌԻ	4 091 770 888,00	+31,23%	5 369 497 202,00	+49,25%	8 013 821 805,00	-18,90%	6 499 206 565,00	+33,50%	8 676 232 152,00	+112,04%
ԿՈՏԱՅՔ	8 852 596 461,50	+61,79%	14 322 652 366,00	+20,81%	17 303 823 237,00	+16,66%	20 186 449 349,00	+2,64%	20 719 958 842,00	+134,06%
ԾԻՐԱԿ	5 581 388 764,00	+7,45%	5 997 140 980,00	+1,91%	6 111 550 163,00	+25,06%	7 643 205 733,00	+32,64%	10 138 179 677,00	+81,64%
ՍՅՈՒՆԻՔ	5 319 076 143,00	+19,39%	6 350 351 397,00	+26,45%	8 029 944 583,00	-4,11%	7 700 198 134,00	+20,36%	9 268 191 518,00	+74,24%
ՎԱՅՈՑ ՁՈՐ	791 813 978,00	+41,20%	1 118 040 761,00	+23,60%	1 381 872 516,00	+34,65%	1 860 677 513,00	+14,69%	2 134 059 960,00	+169,52%
ՏՆԱԿՈՒՇ	1 708 474 232,50	+8,96%	1 861 607 940,00	+21,61%	2 263 985 229,00	+32,65%	3 003 502 779,00	+11,80%	3 358 034 058,00	+96,55%
ԸՆԴՀԱՆՈՒՐ	177 433 399 038,30	+23,82%	219 696 236 072,00	+26,09%	277 006 509 577,00	+17,55%	325 620 260 390,00	+11,92%	364 428 257 575,00	+105,39%



ԲԱՐՁՐ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

»» ՈՐԱԿՅԱԼ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՆ ԵՆ

Բարձր որակավորում ունեցող մասնագետներ

»» Ավարտել է QS համաշխարհային համալսարանների
վարկանիշի 400 ԲՈՒՀ-երից որևէ մեկը

»» Լնի նվազագույնը 10 տարվա աշխատանքային փորձ
վարկանիշի մաս կազմող ընկերություններից որևէ
մեկում

Բարձր որակավորում ունեցող մասնագետների
ներգրավման միջոցառման շրջանակում 2023-2024
թվականներին

Մասնագետների աշխատավարձերի փոխհատուցում

»» Աշխատավարձի 20 տոկոսի չափով փոխհատուցում (ոչ
ավել քան 1 մլն)

»» Դոկտորի գիտական աստիճան ունենալու դեպքում 50
տոկոսի չափով (ոչ ավել քան 1.5 մլն)

- **փոխհատուցում է ստացել 58**
կազմակերպություն
- **617 մասնագետ**
- **2023-2024 թվականների ընթացքում**
աջակցության գումարը կազմել է մոտ 3,83 մլրդ
ՀՀ դրամ



ՀՀ ԼՈՌՈՒ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՌՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԻՐԱԿԻՃԱԿԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԱՂԵՏԻ ԳՈՏԻՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՌՈՒՄ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

»» ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Աջակցություն ստանալու դիմում ներկայացրել է
135 տնտեսավարող

Ծրագրի բյուջե 300 մլն. դրամ

ՆԳՆ-ից նախարարություն ներկայացվել է
տուժած 151 տնտեսավարողների ցանկ

Աջակցություն տրամադրվել է 117
տնտեսավարողի


Տրամադրել է 181,3 մլն ՀՀ դրամի չափով
ֆինանսական աջակցություն

Աջակցություն ստանալու դիմում ներկայացրվել է
95 դիմում Լոռու մարզից և 22 Տավուշի մարզից




» Դիմումների մեծամասնությունը
81% Լոռիից, իսկ 19% Տավուշի
մարզից

Ընդհանուր ներկայացված 117 դիմումից:
38-ը Առևտրային կազմակերպություն, որից **66%**
աջակցություն ստացողները **Լոռու մարզից**, իսկ **34%**
Տավուշի մարզից:
79-ը Անհատ ձեռնարկատեր, որից **89%** աջակցություն
ստացողները **Լոռու մարզից**, իսկ **11%**՝ **Տավուշի մարզից**:



Ընդհանուր աջակցության գումարը ըստ
տնտեսավարողների կազմակերպատիրավական
ձևի, %



■ Առևտրային կազմակերպություն ■ Անհատ ձեռնարկատեր

*100% = 181,3 մլն ՀՀ դրամ ֆինանսական
աջակցություն



ԿԱՆԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶՈՐԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿ «Աքսելերատոր #5»



Pre-Accelerator

**Սկսնակ ձեռներեցների ծրագրի շրջանակներում
թիրախ էր սահմանվել 50 մասնակից, դիմել էր
225 կին ձեռներեց, ՄԱԶԾ լրացուցիչ
ֆինանսավորմամբ մասնակցել են 209-ը:**

Փորձնական ծրագիրը նախագծվել է Հարթակ #5
թիմի կողմից և իրականացվել է IRIS Business
Incubator-ի կողմից:



Accelerator

**Գործող ձեռներեցների ծրագրի շրջանակներում
թիրախ էր սահմանվել 50 մասնակից, դիմել էր 54-
ը, ՄԱԶԾ լրացուցիչ ֆինանսավորմամբ
մասնակցել են 54-ը:**

Փորձնական ծրագիրը նախագծվել է Հարթակ #5
թիմի կողմից և իրականացվել է ISTC հիմնադրամի
(Նորարար լուծումների և տեխնոլոգիաների
կենտրոն) կողմից:



ՀՀ կառավարության կողմից հավանություն արժանացած և/կամ ԱԺ կողմից ընդունված
օրենսդրական նախաձեռնություններ

Օրենսդրական նախաձեռնություններ	Հիմնական նպատակ
«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենսդրական փաթեթ	Ստեղծել բանակցային ուժեղ դիրք ունեցող տնտեսավարողների հետ հարաբերություններում ՓՄՁ սուբյեկտների շահերի պաշտպանության գործուն մեխանիզմներ և բարեխիղճ մրցակցության ու ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ միջավայր:
«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	Ստեղծել իրավական պայմաններ ՍԵՅՖ (SAFE) պայմանագրի միջոցով ՀՀ ընկերություններում ներդրումների ներգրավման համար:
«ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «ՍՊԸ-ների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «ԲԸ-ների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենսդրական փաթեթ	Ստեղծել լրացուցիչ գործիքներ ՀՀ ընկերություններում ներդրումներ կատարելու համար, ինչը կնպաստի ներդրողների ներգրավմանը, կողմերի միջև ծագող հարաբերությունների հստակ կարգավորմանը, իրավահարաբերությունների կայունությանն ու կանխատեսելիությանը:
«ՀՀ հարկային օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ	Սահմանվել է կարգավորում ՀԴՄ կիրառության խախտում իրականացնելու դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցը թողնել նույնը, իսկ այն դեպքում, երբ սխալ են նշվել դասակարգիչները, պատասխանատվության միջոցը մեղմել: Առաջարկվել է կիրառել նախազգուշացում, իսկ մեկ տարվա ընթացքում, նույն խախտումը կրկին կատարելու դեպքում կիրառել տուգանք` 50000 դրամի չափով:



Օրենսդրական նախաձեռնություններ	Հիմնական նպատակ
«Երկակի նշանակության ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին և «մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենսդրական փաթեթ	Արդեն իսկ փորձաքննության ենթարկված և փորձաքննության արդյունքում երկակի կամ ռազմական նշանակության ապրանքներ չճանաչված ապրանքների ցանկի հրապարակման և դրա հիման վրա մաքսային ձևակերպումների դյուրացման համար իրավական հիմքերի ստեղծումն է, լրացուցիչ վարչարարության և ֆինանսական ծախսերի կրճատումն է, գործարար միջավայրի բարելավումը՝ հատկապես տեխնոլոգիական ոլորտի ընկերությունների համար:
«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի n 526-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	Ստեղծել պայմաններ ՀՀ գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի գիշման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրերի միջոցով գնումների մասնակիցների համար առավել նպաստավոր պայմաններով ֆինանսավորման հնարավորություններ ստեղծելու համար:
«ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», ««սպր-ների մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր	ՀՀ ընկերություններում ներդրումներ կատարելու համար լրացուցիչ գործիքներ ստեղծել: Այդ գործիքների իրավական կարգավորումը կնպաստի ներդրումների և ներդրողների ներգրավմանը, փոխարկելի փոխառության պայմանագրի կողմերի միջև ծագող հարաբերությունների հստակ կարգավորմանը, իրավահարաբերությունների կայունությանն ու կանխատեսելիությանը:
«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին օրենքի նախագիծ	Դեբիտորական պարտքը առանց դատարանի որոշման շահութահարկի գծով ծախս ճանաչելու համար սահմանված 100.000 դրամ շեմի բարձրացում 300.000-ի՝ կրճատելով հարկերի հաշվարկման հետ կապված վարչարարությունը:

Շնորհակալություն ուշադրության համար



1 Ֆինանսական ռեսուրսների հասանելիության ավելացում:

1. ՓՄՁ Պետական աջակցության գործիքակազմի արդյունավետության և ծածկույթի ընդլայնում,
2. Անշարժ գույքին այլընտրանքային գրավի կիրառությանը առնչվող օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի զարգացում,
3. Ֆինանսական գրագիտության բարձրացում և թափանցիկ գործարարության մշակույթի զարգացում,
4. Ֆինանսական շուկայի դիվերսիֆիկացիայի համար բարենպաստ պայմանների ստեղծում՝ ներդրումային/վենչուրային հիմնադրամներ, բիզնես-իրեշտակներ, այլընտրանքային ֆինանսավորման գործիքներ,
5. Սնանկության համակարգի բարեփոխում:

2 ՓՄՁ սուբյեկտների կարողությունների և ձեռնարկատիրական մշակույթի զարգացում:

1. Նորարարության ներդնումը և կիրառումը թիրախավորող աջակցության գործիքակազմի մշակում և ներդնում պետական աջակցության կառույցների միջոցով,
2. ՓՄՁ ոլորտում գործող հանրային կառույցների և բիզնեսի զարգացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում՝ ՓՄՁ-ում կարողությունների բացը լրացնելու ուղղությամբ,
3. Ձեռնարկատերերի և ՓՄՁ-ում զբաղվածների որակավորման բարձրացմանն ուղղված միջավայրի կայացում,
4. ՓՄՁ-ի կողմից գիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների և տեխնոլոգիական լուծումների նկատմամբ պահանջարկի խրախուսման ծրագրի մշակում և իրագործում,
5. Ձեռնարկատիրական մշակույթի զարգացում,
6. Սոցիալական ձեռնարկատիրության տեսանելիության



3 ՓՄՁ սուբյեկտների համար շուկաների հասանելիության ապահովում:

1. ՓՄՁ Պետական աջակցության գործիքակազմի արդյունավետության և ծածկույթի ընդլայնում՝ օգտագործելով համագործակցության բոլոր հնարավորությունները,
2. Անշարժ գույքին այլընտրանքային գրավի կիրառությանը առնչվող օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի զարգացում,
3. Ֆինանսական գրագիտության բարձրացում և թափանցիկ գործարարության մշակույթի զարգացում,
4. Ֆինանսական շուկայի դիվերսիֆիկացիայի համար բարենպաստ պայմանների ստեղծում՝ ներդրումային/վենչուրային հիմնադրամներ, բիզնես-հրեշտակներ, այլընտրանքային ֆինանսավորման գործիքներ,
5. Սնանկության համակարգի բարեփոխում:

4 ՓՄՁ զարգացման համար բարենպաստ ինստիտուցիոնալ և իրավական միջավայրի ապահովում:

Ինստիտուցիոնալ՝

1. Մասնավոր-պետություն երկխոսության մեխանիզմների կայացում և կիրառություն,
2. Պետական աջակցության կառույցների կարողությունների զարգացում և նրանց գործունեության արդյունավետության և թափանցիկության բարձրացում՝ կորպորատիվ կառավարման, հաշվետվողականության մեխանիզմների ներդրմամբ,
3. Վիճակագրության բարելավում,
4. ՓՄՁ-ի աջակցության ոլորտում ծրագրեր իրականացնող դոնորների աշխատանքի համակարգում:

Իրավական բարենպաստ միջավայրի ապահովում՝

1. ՓՄՁ ազդեցության գնահատման մեխանիզմների մշակում և գործադրում,
2. Հարկային/մաքսային/այլ վարչարարական բեռի գնահատում և պարզեցում ՓՄՁ-ների համար:



Կատարված գործողություններ

- ✓ **Սկսնակ** ձեռնարկատեր ծրագրի իրականացում:
- ✓ **Կրթական** և իրազեկման միջոցառումներ:
- ✓ **ՓՄՁ** գնահատման մեթոդաբանության մշակում և ֆինանսական հաստատությունների կողմից այն կիրառելու կարողությունների ձևավորում:
- ✓ **Ներդրումային** ֆոնդերի և բիզնես-հրեշտակների կայացմանը նպաստող օրենսդրական բարեփոխումների փաթեթի մշակում:
- ✓ **Կապիտալում** մասնակցությամբ զանգվածային ֆինանսավորման ենթաօրենսդրական դաշտի ստեղծում, օրենսդրական ակտերի մշակում:
- ✓ **Հասանելի**, ոչ ֆորմալ կրթության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում ՓՄՁ շրջանում, օնլայն հարթակների միջոցով:

- ✓ **Թիրախային** կրթական ծրագրերի իրականացում կանանց, երիտասարդների և հայրենադարձների համար:
- ✓ **ՓՄՁ** վարկերի պորտֆելի հիման վրա ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկումների խրախուսում, Սփյուռքում դրանց նկատմամբ պահանջարկի հնարավորությունների գնահատում մասնավոր ներդրումային ֆոնդերի հետ համագործակցելով:
- ✓ **Այլընտրանքային** ֆինանսավորման գործիքների կիրառության վերաբերյալ իրազեկման միջոցառումներ բիզնեսի աջակցման կառույցների և ասոցիացիաների միջոցով:
- ✓ **Վեճուրային** հիմնադրամների և բիզնես-հրեշտակների հետ շարունակական կապի պահպանում իրենց աշխատանքը ակտիվացնելու նպատակով, այդ թվում՝



- ✓ **Իրականացնել** թիրախային շուկաներում ընտրված ապրանքների/ծառայությունների պահանջարկի վերլուծություններ և ապահովել դրանցում տեղ գտած բիզնես հնարավորությունների ներկայացումը ՓՄՁ համայնքին:
- ✓ **Միջազգային** առևտրային հարթակներում ՓՄՁ-ների ներկայացվածության տեխնիկական աջակցություն:
- ✓ **Բացահայտել** արտադրանքի համար պոտենցիալ շուկաներ մուտքի հետ կապված առկա խոչընդոտները և աջակցել հավաստագրերի ստացմանը:
- ✓ **Տեխնիկական** աջակցություն միջազգային առևտրի հարթակներում ներկայացվելու համար:
- ✓ **Բարելավել** ՓՄՁ-ի բիզնես որոշումներին առնչվող դեմագրաֆիական և տնտեսական ցուցանիշների վիճակագրական տվյալների մատչելիությունը և որակը:
- ✓ **Առցանց** հայալեզու ուսուցողական գործիքների մշակում և տարածում:
- ✓ **Խորհրդի** իրավասությանը վերապահված հարցերի շուրջ կլոր սեղան-քննարկումների, հարցումների և հանրային քննարկումների կազմակերպում:
- ✓ **Գործող** ծրագրերին ՓՄՁ-ների ուղղորդման մատչելի մեխանիզմի ներդրում:
- ✓ **ՓՄՁ**-ին առնչվող բոլոր իրավական ակտերի ստեղծման և փոփոխությունների հետ կապված կազմակերպել հանրային լսումներ:
- ✓ **ՓՄՁ**-ի կողմից բարձրաձայնված խնդիրների օրենսդրական լուծումների մշակում:
- ✓ **ՓՄՁ** աջակցություն իրականացնող մասնավոր նախաձեռնությունների քարտեզագրում և պետական աջակցության իրականացում տեղեկատվության տարածման, վերլուծական նյութերի տրամադրման և այլ գործիքների միջոցով: